



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

#### Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

24.06.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Մ.Գասպարյանը, Ն.Վարդանյանը, Ն.Բաբայանը, Տ. Եփրեմյանը, Ս.Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

**Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանյանը, համայնքի գլխավոր խորհրդական Վ. Զիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

#### Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
5. Հողամասի վարձակալության պայմանագրում լրացում կատարելու մասին:
6. Քաղաքացիներ Հրաչիկ, Անահիտ, Համլետ և Արուսիկ Ալոյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-067-0122-0030 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով և 07-067-0113-0026 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0117-0025 կադաստրային ծածկագրով 1,35722 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության համարժեք հողամասի հետ փոխանակելու մասին:
7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

8. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության» ՊՈԱԿ-ին տրամադրելու մասին:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ -8**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

***Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:***

***/Ձեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել ներկայացվող փոփոխությունները և լրացումները:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-8**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***